

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը (այսուհետ՝
Նախարարություն) հայտարարում է Նախարարությունում փորձագետ ներգրավելու մասին

**Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության գնումների
համակարգման և տնտեսական բաժնի փորձագետ**

Աշխատանքների համառոտ նկարագրությունը՝

- 1) Նախարարության գնման գործընթացների (գնման հայտարարությունների և հրավերների կազմման, էլեկտրոնային գնումների համակարգով հրապարակման, հայտերի ընդունման, գնահատման, ընտրված մասնակցի որոշման) աշխատանքների իրականացում:
- 2) Նախարարության միջնաժամկետ ծախսերի ծրագրի և հաջորդ տարվա պետական բյուջեի նախագծի կազմում ընդգրկվելիք ծախսային ծրագրերով նախատեսվող գնումներին վերաբերող փաստաթղթերի կազմման աշխատանքների իրականացում:
- 3) Նախարարության գնումների միասնական անվանացանկի կազմման աշխատանքների իրականացում:
- 4) Նախարարության գնման պայմանագրերի կնքման (պայմանագրերի նախագծերի կազմման, մասնակիցների կողմից կնքված պայմանագրերի և պայմանագրերի կատարման ապահովումների ընդունման, պայմանագրերի կնքման և պայմանագրերի կառավարման ու գնումների հաշվետվողականության մոդուլ մուտքագրման, ըստ անհրաժեշտության կնքված պայմանագրերում փոփոխությունների կատարման) աշխատանքների իրականացում:
- 5) Նախարարության գնման պայմանագրերի կատարման նկատմամբ նախնական հսկողության (պայմանագրերի կառավարման և գնումների հաշվետվողականության մոդուլ համակարգով պայմանագրերի կամ դրանց մի մասի կատարման վերաբերյալ հանձնման-ընդունման արձանագրությունների ընդունման և հաստատման) աշխատանքների իրականացում:

Փորձագետ ներգրավելու ժամկետը՝ մեկ տարի ժամկետով:

Փորձագետի պարտականությունները՝

1. Բարեխղճորեն կատարել աշխատանքային պայմանագրով ստանձնած աշխատանքները:
2. Պահպանել համապատասխան մարմնում սահմանված ներքին կարգապահական կանոնները, աշխատանքային կարգապահությունը:
3. Պահպանել աշխատանքի պաշտպանության և անվտանգության ապահովման միջոցները:
4. Իրականացնել աշխատանքային օրենսդրությամբ, «Հանրային ծառայության մասին» օրենքով և աշխատանքային պայմանագրով իրեն վերապահված այլ պարտականությունները:

Փորձագետին ներկայացվող պահանջները՝

- 1) բարձրագույն կրթություն
- 2) առնվազն 4 տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ գնումների գործընթացի իրականացման աշխատանքների առնվազն 4 տարվա աշխատանքային փորձ:
- 3) <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով՝ պետք է ընդգրկված լինի լիազորված մարմնի կողմից հրապարակվող գնումների որակավորված համակարգողների ցուցակում:
- 4) իր լիազորությունների հետ կապված անհրաժեշտ իրավական ակտերի իմացություն, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն:

- 5) հաշվետվությունների կազմման, տեխնիկական առաջադրանքների մշակման, վերլուծությունների կատարման փորձ.
- 6) անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում.
- 7) համակարգչով և ժամանակակից այլ միջոցներով աշխատելու ունակություն:

Ղիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 14.11.2019թ.

Աշխատանքի վայրը՝ ք. Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3
հեռ. 010-511-355, 010-511-357, Էլ. հասցե՝ <http://mtad.am>

Չի թույլատրվում հավակնորդի հետ պայմանագիր կնքել, եթե տվյալ անձը պաշտոնից ազատվել կամ տվյալ անձի ծառայությունը վերջին մեկ տարվա ընթացքում դադարեցվել է կարգապահական տույժ կիառելու, օրենքով սահմանված փորձաշրջանը չանցնելու, օրենքի խախտմամբ պաշտոնի նշանակվելու, «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջները չպահպանելու, Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելու, ուժի մեջ մտած՝ նրա նկատմամբ կայացված մեղադրական դատավճռի դեպքերում, բացառությամբ այն դեպքերի, երբ նշանակվել է տուգանք, ինչպես նաև երկու տարի անընդմեջ իր մեղքով վերապատրաստման անհատական ծրագրով հաստատված կրեդիտները չստանալու դեպքում:

Ընտրություն կատարելու եղանակն է՝ ղիմում ներկայացրած քաղաքացիների փաստաթղթերի ուսումնասիրություն

Ղիմող ՀՀ քաղաքացիները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

- ղիմում Նախարարության գլխավոր քարտուղարի անունով (ղիմումը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս),
- հայտարարություն ՀՀ կառավարության 02.08.2018թ. N 878-Ն որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետով նախատեսված սահմանափակումների բացակայության մասին (հայտարարությունը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս),
- տվյալ աշխատանքին անցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմի /ների/, վկայականի /ների/, աշխատանքային գրքույկի (վերջինիս բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք/ներ համապատասխան մարմնից/ներից) պատճենները բնօրինակների հետ միասին,
- արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասից կցագրման վկայականի պատճենները՝ բնօրինակի հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք,
- մեկ լուսանկար 3+4 սմ չափսի,
- անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը:

ՀՀ քաղաքացի փաստաթղթերը ներկայացնում է անձամբ:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր՝ ժամը 9.30-ից մինչև 12.30-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից: